

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ**



ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
HEALTH AND LABOR INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA

ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☎ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

Հաշվետվությամբ ընդգրկված ժամանակահատված՝

2025 թվականի 3-րդ եռամսյակ

Որակի ապահովման վարչության 2025 թվականի 3-րդ եռամսյակի հաշվետվությունը կազմվել է՝ ելնելով որակի ապահովման վարչության գործունեության տարեկան ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսված միջոցառումների շրջանակներում իրականացված ներքին հսկողության արդյունքներից: Մասնավորապես պարզվել է հետևյալը.

1. Կարգապահական կանոնների պահպանման ուսումնասիրություն և վերլուծություն (Ծրագրի 1-ին միջոցառում).

Ուսումնասիրության արդյունք.

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնում (այսուհետ նաև՝ Տեսչական մարմին) արձանագրվել է ներքին կարգապահական կանոնների խախտման մեկ դեպք:

Տեսչական մարմնի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 25-ի N ԱԿ 944-Ա հրամանով՝ որակի ապահովման վարչության 2025 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ Ն/14287-2025 զեկուցագրի հիման վրա «ԱՐԵՎԻԿ ԽԱՌԱՏՅԱՆ ԿԱՐԱՊԵՏԻ» անհատ ձեռնարկատիրոջը պատկանող գեղեցկության սրահում ստուգման իրականացման պատշաճությունը պարզելու նպատակով նշանակվել է ծառայողական քննություն:

Ծառայողական քննությունը դեռևս ընթացքի մեջ է:

Աշխատաժամանակի ռեժիմի պահպանման ուսումնասիրություն և վերլուծություն.

Որակի ապահովման վարչության կողմից կատարվել է 2025 թվականի 3-րդ եռամսյակի ընթացքում Տեսչական մարմնի աշխատակիցների աշխատանքի ներկայանալու և աշխատավայրը լքելու վերաբերյալ մուտքի/ելքի սարքի տվյալների ուսումնասիրություն: Աշխատանքային օրը սկսելուց հետո աշխատանքի ուշ

ներկայացած կամ աշխատանքի վայրը սահմանված ժամկետից շուտ քաժ աշխատակիցների անունները դուրս են գրվել համապատասխան հանգամանքները պարզելու նպատակով: Բոլոր անձանց անվամբ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում առկա են եղել արձակման և գործուղման թերթիկներ: Արձակման թերթիկում սահմանված ժամից աշխատակցի փաստացի բացակայության դեպքում, վերջինիս աշխատանքի վերադառնալուց անմիջապես հետո լրացվում և համակարգ է մուտքագրվում նոր արձակման թերթիկ:

Գործուղման թերթիկների ուսումնասիրությունը վկայում է, որ թեև գործընթացը հիմնականում իրականացվում է ընդունված կարգին համապատասխան, սակայն առկա են որոշ փաստաթղթային թերություններ: Մասնավորապես, որոշ դեպքերում գործուղման թերթիկները լրացվել են ոչ պատշաճ կերպով, որի հետևանքով բաց են թողնվել անհրաժեշտ դաշտերի լրացումները, ինչպիսիք են՝ գործուղման նպատակը, գործուղվող անձանց հայրանունները, գործուղման հասցեն և այն փաստաթղթի վերաբերյալ տվյալները, որը հիմք է հանդիսացել գործուղում իրականացնելու համար:

Տեսչական մարմնի աշխատողների նկատմամբ կիրառվող խրախուսումներ.

Տեսչական մարմնի աշխատողների նկատմամբ խրախուսումները կիրառվում են տվյալ ամսվա համար խրախուսումների նպատակով հատկացված ֆինանսական միջոցներից՝ հիմնվելով ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացվող գնահատականների և դրանց համարժեք հիմնավորումների վրա: Ստորաբաժանումների ղեկավարները գնահատումն իրականացնելիս հաշվի են առնում աշխատակիցների ծառայողական պարտականությունների պատշաճ և ժամանակին կատարումը, նախաձեռնողականությունը և արդյունքահեն աշխատանքային մոտեցումը:



Յուրաքանչյուր աշխատակցի կատարած աշխատանքի արդյունքները, ինչպես նաև ստորաբաժանման ղեկավարի կողմից տրված գնահատականը Տեսչական մարմնի ղեկավարի կողմից ենթարկվում են լրացուցիչ ուսումնասիրության և ճշգրտման: Առանձին դեպքերում տրված գնահատականները Տեսչական մարմնի ղեկավարի կողմից ենթարկվում են վերանայման՝ հիմնվելով ընթացիկ հաշվետվությունների և գործառույթային ցուցանիշների վերլուծության վրա:

Ստորաբաժանումների/աշխատողների կատարողական կարգապահության ուսումնասիրություն և վերլուծություն.

Տեսչական մարմնի ստորաբաժանումների և աշխատակիցների կատարողական կարգապահության ընդհանուր մակարդակը ընդհանուր առմամբ բարձր է: Վարչապետի աշխատակազմից ստացված հանձնարարականներն ու Տեսչական մարմնի ղեկավարի հրամանները կատարվել են սահմանված ժամկետներում: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ հաշվետու ժամանակահատվածում համապատասխան ստորաբաժանումների կատարած աշխատանքների վերաբերյալ որոշ հաշվետվություններ չեն ներկայացվել կամ ոչ միշտ են ներկայացվել ժամանակին: Ներկայացված բոլոր հաշվետվությունները բովանդակային առումով համապատասխանել են սահմանված պահանջներին, սակայն որոշ դեպքերում նկատվել են հաշվարկային անճշտություններ, որոնք ժամանակին վերացվել են: Ոչ էական բացթողումները հիմնականում կրել են տեխնիկական բնույթ: Նկատվել են անհամապատասխանություններ փաստաթղթերի վրա նշված ամսաթվի և դրանց փաստացի ստորագրման օրերի միջև: Հարկ է նշել, որ ի տարբերություն նախորդ եռամսյակի՝ հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է քաղաքացիներից և այլ գերատեսչություններից ստացված հարցումներին և գրություններին տրվող պատասխանների պատշաճ և ժամանակին ներկայացումը:

Առաջարկություններ.



ՀՀ ԱՌԴԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԱԲՈՐԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՏՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA

ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☎ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

1) Ապահովել հաշվետվությունների պատշաճ կազմումն ու դրանց ժամանակին ներբեռնումը փաստաթղթաշրջանառության համակարգ:

2. Բարեվարքության կանոնների պահպանման ուսումնասիրություն և վերլուծություն (Ծրագրի 2-րդ միջոցառում).

Էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ դիմումներ և բողոքներ չեն ստացվել:

3. Տեսչական մարմնի դեմ բերված բողոքների ուսումնասիրություն և վերլուծություն (Ծրագրի 3-րդ միջոցառում).

Ուսումնասիրության արդյունք.

Տեսչական մարմնի դեմ բերվել է 135 բողոք (նախորդ հաշվետու ժամանակահատվածում՝ 121 բողոք), որից 41 բողոք՝ Տեսչական մարմին, 94 բողոք՝ դատարան:

Ոլորտներ	Բողոքների ընդհանուր թիվ	Այդ թվում՝	
		Տեսչական մարմին	Դատարան
Դեղերի շրջանառություն	40	3	37
Բժշկական օգնություն և սպասարկում	17	4	13
Բնակչության սանիտարահամաճ. անվտանգության ապահովում	18	7	11
Աշխատանքային իրավունք	56*	25	31*
Աշխ. անվտանգություն	6*	2	4*
ԸՆԴԱՄԵՆԸ	135*	41	94*


* 1 բողոք 2 ոլորտով



ՀՀ ԱՌԴԱՐԱՆՈՒԹՅԱՆ և ԱՇԽԱՏԱՆԻ ՏԵՏՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA

ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☎ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

Տեսչական մարմնի դեմ բերված բողոքներ 3-րդ եռամսյակ, 2025թ.



Տեսչական մարմին ներկայացված 41 բողոքից.


- 10 բողոք բավարարվել /բեկանվել է,
- 20 բողոք մերժվել է,
- 1 դեպքում բողոքարկման վարույթը կարճվել է,
- 1 դեպքում բողոքարկման վարույթը կասեցվել է,
- 9 բողոքի քննությունն ընթացքի մեջ է:



ՀՀ ԱՌՈՂՎԱՐԿԱՎԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆԹՅԱՆ ՏԵՏՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA

ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☎ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

Վարչական բողոքների արդյունքներ 3-րդ եռամսյակ, 2025թ.



Դատարան ներկայացված 94 հայցադիմումներից 58-ի դեպքում կայացվել է վարույթ ընդունելու մասին որոշում, 3 հայցադիմումի ընդունումը մերժվել է, 12-ը՝ վերադարձվել, 21-ի քննումն ընթացքում է:


Դատական կարգով բողոքարկված նախկին գործերի վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում կայացվել է **92** վճիռ/որոշում: Միաժամանակ, 1 դեպքում վարչական դատարանի կողմից վարչական գործի վարույթը կարճվել է:

92 գործով վճիռներից 59-ը կայացվել է հոգուտ հայցվորի (64.1%), 3 դեպքում հայցը բավարարվել է մասնակիորեն: Ընդ որում՝ 92 վճռից 39 վճիռ կայացվել է վարչական, 29 վճիռ կայացվել է վարչական վերաքննիչ դատարանի կողմից, իսկ 24 վճիռ՝ վճռաբեկ դատարանի կողմից:



ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐ

3-րդ եռամսյակ, 2025թ.



Բացահայտված խնդիրները և դիսկերը.

Տեսչական մարմին ներկայացված բողոքների ուսումնասիրությամբ պարզվել է հետևյալը.

Տեսչական մարմին ներկայացված 41 բողոքից քննվել է 31-ը, որից 10 բողոք բավարարվել/բեկանվել է (32.3%): Պատճառները, ինչպես նաև արձանագրված այլ խնդիրները հետևյալն են.

1) Բուժական մեթոդի գովազդի նյութերի ուսումնասիրության և բողոքարկման վարույթի շրջանակներում իրականացված վարչական լսման արդյունքում պարզ է դարձել, որ համացանցային էջերը չեն պատկանել ընկերությանը և ընկերությունը չի իրականացրել նշված բուժական մեթոդների գովազդներ:

2) Ընկերության կողմից թվով երկու աշխատակիցների ամենամյա արձակուրդի (այդ թվում լրացուցիչ) չօգտագործված բոլոր օրերի համար միջին աշխատավարձը վճարվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի և 170-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների պահպանմամբ, ուստի սույն մասով իրավախախտման դեպքը բացակայել է:

3) Վարչական վարույթը ենթակա է եղել կարճման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի հիմքով:

4) Գործում առկա չի եղել ապացույց այն մասին, որ գործատուի մեղքով կամ վերջինիս գործողության կամ անգործության հետևանքով է աշխատակիցը կրել առողջական վնաս:

5) Խնդրո առարկա որոշումը կայացվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ, մասնավորապես՝ վարույթի մասնակցին հնարավորություն չի տրվել արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

6) Գործում բացակայել է այն ապացույցը, որը կփաստեր բողոքաբերի կողմից գերեզմանատան կազմակերպման համար նախատեսված վայրից դուրս հողարկավորության իրականացման փաստը:

7) Վարչական տույժը կիրառվել է այն խախտումների համար, որոնք կատարվել են 2005 թվականից մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը, սակայն վերը նշված ժամանակահատվածի նկատմամբ Տեսչական մարմինը չի ունեցել օրենքով սահմանված տվյալ ոլորտի նկատմամբ վերահսկողական գործառույթներ իրականացնելու լիազորություն, ուստի որոշումը կայացվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 33-րդ հոդվածի սխալ կիրառմամբ՝ միաժամանակ խախտելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը:

8) Տեսչական մարմինը, հաշվի չառնելով ջրային գործոնով պայմանավորված աղիքային վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման վտանգը, չի կարգադրել ժամանակավոր դադարեցնել համայնքի համապատասխան բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի խմելու ջրի օգտագործումը:

9) Խնդրո առարկա հանդիսացող կարգադրագրում նշվել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 185-րդ հոդվածի խախտում առկա չէ, մինչդեռ



վարչական վարույթում առկա փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ բողոքաբերը աշխատել է 2024 և 2025 թվականների նշված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին:

10) Վիճարկվող որոշմամբ արձանագրված իրավախախտումը առկա չի եղել, ինչպես նաև նշված իրավախախտման մեջ առկա չի եղել բողոքաբերի մեղքը:

Նախկինում բերված դատական բողոքների մասով, որոնց վերաբերյալ հաշվետրու ժամանակահատվածում կայացվել են վճիռներ.

Ըստ դատարանի.

- 1) ՎԻՎ արձանագրությամբ առհասարակ չի հաստատվել այն ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի ներկայությամբ կազմված լինելու իմպերատիվ պահանջը կատարված լինելու փաստը: (12 դեպք)
- 2) Հայցվորը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի հիմքով չի ունեցել քաղաքացու անհատական աշխատանքային հարաբերությունները կարգավորելու նպատակով (աշխատանքի ներկայանալու օրվա վերաբերյալ) անհատական իրավական ակտ ընդունելու պարտականություն, որի հաշվառմամբ էլ վերջինս չէր կարող ենթարկվել վարչական պատասխանատվության այնպիսի արարքի համար, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված չի եղել պարտականություն:
- 3) Հաշվի առնելով այն, որ որևէ իրավական ակտով արգելված չէ աշխատողի աշխատավարձը ոչ իր անվամբ, սակայն իր կողմից մատնանշված հաշվեհամարին փոխանցելու հնարավորությունը՝ վարչական մարմնի կողմից վարչական պատասխանատվության միջոցը կիրառվել է ոչ իրավաչափորեն:
- 4) Վիճարկվող որոշումը կայացվել է երկամսյա ժամկետի խախտմամբ: (2 դեպք)
- 5) Դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունների կազմակերպումը և իրականացումը բացառապես ՀՀ առողջապահության նախարարությանը վերապահված լինելու



պայմաններում՝ վիճարկվող կարգադրագրի հիմքում դրվել են «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերության փորձագիտական եզրակացությունները և նույն ընկերության ներմուծման տվյալների բազայում առկա տեղեկատվությունը: (3 դեպք)

- 6) Վարչական մարմինը չի իրականացրել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, մասնավորապես՝ պատշաճ դիտարկման չի արժանացրել այն հանգամանքը, որ բացակայել է հայցվորի մեղքի առկայությունը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու մեջ:
- 7) Վիճարկվող որոշումն ընդունվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ:
- 8) Վիճարկվող կարգադրագրով վարչական մարմինը փորձել է լուծել գործատուի և աշխատողի միջև ծագած աշխատանքային վեճ: (4 դեպք)
- 9) Վարչական մարմինը, կրելով քաղաքացու կողմից կատարված վարչական իրավախախտման փաստի ապացուցման պարտականությունը, գործի շրջանակներում չի ներկայացրել այնպիսի ապացույցների համակցություն, որով կարող էր հիմնավորվել վերջինիս կողմից իր պարտականության կատարումը:
- 10) Հայցվորի կողմից դեղատոմսով բաց թողնվող թվով 103 անվանում դեղերը բազմակի անգամ առանց դեղատոմսերի առկայության իրացնելու փաստի առկայության հանգամանքը հաստատելու և, ըստ դրա՝ հայցվորի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 7-րդ մասի դիսպոզիցիայով նախատեսված զանցանքը կատարված լինելու հարցը պարզված համարելու ու վերջինիս նշված իրավախախտման



համար վարչական պատասխանատվության ենթարկելու համար գործում առկա չի եղել իրավախախտման փաստը հաստատող որևէ ապացույց:

- 11) Գործի նյութերում չեն եղել բավարար ապացույցներ բողոքաբերի դեղատոմսով բաց թողնվող թվով 62 անվանում դեղերը բազմակի անգամ առանց դեղատոմսերի առկայության իրացնելու, պատասխանատու անձանց չնշանակելու և նվազագույն տեսականիում 5 անվանում դեղերի բացակայության փաստերի վերաբերյալ, այսինքն՝ գործի ելքը պայմանավորող նշված փաստերը մնացել են չապացուցված:
- 12) Վիճարկվող որոշումը մասնակի՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.8-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմամբ վարչական տուգանքի առաջադրման մասով, ընդունվել է օրենքի խախտմամբ, մասնավորապես՝ կիրառելի իրավական նորմերի սխալ մեկնաբանման արդյունքում:
- 13) Գործում առկա հարկային հաշիվ ապրանքագրերով մատակարարված դեղի վերաբերյալ տեղեկությունները չեն համապատասխանել վիճարկվող որոշմամբ նշված իրացված դեղի վերաբերյալ տեղեկություններին, ուստի վիճարկվող որոշման հիմքում դրված հարկային հաշիվ ապրանքագրերը չէին կարող պատշաճ ապացույց համարվել հաստատելու համար այն փաստը, որ հայցվորի կողմից իրացվել է որոշմամբ նշված ՀՀ-ում չգրանցված դեղը:
- 14) Վարչական մարմինը չի պահպանել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետի պահանջը, որով առաջնորդվելու դեպքում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 41-րդ հոդվածով պետք է պատասխանատվության ենթարկեր տնտեսավարող սուբյեկտին:
- 15) Վարչական մարմինը հայցվորի կողմից ենթադրյալ իրավախախտման կատարումը հաստատված է համարել՝ հիմք ընդունելով ՎԻՎ արձանագրությամբ շարադրված տեղեկությունները և լուսանկարները, որոնք



կատարվել են իրավախախտման վայրում, մինդեռ միայն նշյալ փաստաթղթերով չէր կարող հիմնավորվել բողոքաբերին վերագրված՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 173.3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավախախտումը կատարելու փաստը, քանի որ վարչական մարմնի կողմից ներկայացված լուսանկարներից այդպես էլ պարզ չի դարձել՝ դրանք ե՞րբ, ո՞ւմ կողմից և ի վերջո որտե՞ղ են կատարվել:

- 16) Ծառայողական քննության ընթացքում կազմված եզրակացությունը չի բովանդակել գործի քննությամբ պարզված կոնկրետ այնպիսի տվյալներ, որոնք կարող էին հիմք հանդիսանալ վիճարկվող հրամանով հայցվորի նկատմամբ հատկապես «խիստ նկատողություն» կարգապահական տույժը կիրառելու համար:
- 17) Գործում առկա նյութերի հետազոտմամբ չի հաստատվել վիճարկվող որոշման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքների առկայությունն, այն է՝ չգրանցված և օրենքի խախտմամբ ներմուծված, առանց դեղատոմսի դեղեր իրացնելը: (2 դեպք)
- 18) Վարչական վարույթի նյութերով և գործում առկա բոլոր ապացույցներով չի հաստատվել հայցվորի կողմից մանկական օրթոպեդի հետդիպլոմային կրթություն և վերջին 5 տարվա ընթացքում ՀՀ օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում շարունակական զարգացման հավաստագիր չունենալու պայմաններում մանկական ներզատաբանական ծառայություն իրականացնելու փաստը:
- 19) Վարչական մարմինը վարչարարությունն իրականացրել է թերի և ոչ բավարար ապացույցների առկայության պայմաններում հանգել է սխալ եզրահանգման՝ հայցվորին ենթարկելով վարչական պատասխանատվության մի արարքի համար, որպիսին կատարված լինելը չի հաստատվում վարչական վարույթի նյութերով:



- 20) Գործի շրջանակներում վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում չի ձեռնարկել բավարար միջոցներ սույն գործի համար անհրաժեշտ փաստի՝ դեղերի ներմուծման ժամկետի պարզման համար, որի արդյունքում վերագրյալ իրավախախտման համար հայցվորի նկատմամբ տույժ նշանակելու ժամկետը հաշվարկվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ սահմանված ընդհանուր կանոնին համապատասխան, այնինչ պետք է հաշվարկվեր նույն հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված ընդհանուր կանոնին համապատասխան՝ իրավախախտումը կատարվելու օրվանից:
- 21) Վիճարկվող վարչական ակտը՝ «ՀՀ աշխատանքային օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ և 192-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջները խախտված լինելու» պատճառաբանության մասով, չի պարունակել գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքների շարադրանքը:
- 22) Վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կազմման վերաբերյալ ծանուցագիրը հայցվորը ստացել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմումից հետո:
- 23) Վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելիս վճռաբեկ բողոքին չի կցել վճռաբեկ բողոքի պատճենը սույն գործով հայցվորին ուղարկելու մասին ապացույցը:

Առաջարկություններ.

- 1) Վերլուծության ենթարկել միևնույն իրավական հիմքով բազմակի բավարարված դատական գործերը և մշակել կազմակերպչական լուծումներ՝ թերի գործելակերպի կրկնությունը բացառելու համար:
- 2) Հաշվի առնելով վերաքննիչ վարչական դատարանի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ չօգտագործված արձակուրդի դիմաց վճարվող



փոխհատուցումը չի կարող համարվել «աշխատավարձ», հետևապես այն չի կարող որակվել որպես «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169⁸-րդ հոդվածի 1-ին մասով տուգանքի ենթակա աշխատավարձի չվճարում, առաջարկվում է վերանայել Տեսչական մարմնի մոտեցումը՝ նման դեպքերում վերոնշյալ հոդվածով վարչական պատասխանատվություն կիրառելու մասով:

4. Տեսչական մարմնի աշխատանքների վերաբերյալ ստացված արձագանքների վերլուծություն և գնահատում (Ծրագրի 4-րդ միջոցառում).

Ուսումնասիրության արդյունք.

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի «Թեժ գիծ» ծառայությամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ընդհանուր առմամբ ստացվել է 2133 զանգ: Տեսչական մարմնի ֆեյսբուքյան էջում և պաշտոնական կայքէջի «Նորություններ» բաժնում հրապարակվել է Տեսչական մարմնի գործունեության և աշխատակիցների կատարած աշխատանքի վերաբերյալ հանրության կողմից ստացված արձագանքների վերաբերյալ տեղեկատվություն: Տեսչական մարմին «Թեժ գիծ» ծառայությամբ ստացված զանգերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ քաղաքացիների կողմից հնչեցված հարցերի մեծ մասը՝ 35.4%, վերաբերել են աշխատանքային իրավահարաբերություններին, ինչը վկայում է նաև աշխատանքային օրենսդրության դրույթների ոչ լիարժեք ընկալման մասին՝ ինչպես աշխատողների, այնպես էլ գործատուների կողմից: Զգալի թիվ են կազմել նաև այն զանգերը, որոնք ունեցել են տեղեկատվական բնույթ: Դրանք հիմնականում վերաբերել են Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների և վարչական վարույթի ընթացակարգերին: Հարցադրումներ են իրականացվել օտարերկրյա քաղաքացիների աշխատանքի ընդունման կարգի, աշխատաժամերի, փորձաշրջանի, գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրերի լուծման, վերջնահաշվարկի վճարման, համատեղությամբ աշխատանքի առանձնահատկությունների, ինչպես նաև հղիության և



ծննդաբերության արձակուրդի տրամադրման վերաբերյալ: Որոշ զանգեր առնչվել են ժամանակավոր անաշխատունակության թերթիկներին, բժշկական արտադրատեսակների ոչնչացմանն ու գովազդին:

Փոքրաթիվ զանգեր են ստացվել դեղերի ոչնչացման կարգի, ռազմավարական պաշարների պահուստում ներառվող դեղերի և պահանջվող փաստաթղթերի վերաբերյալ: Որոշ քաղաքացիներ դժգոհություններ են հայտնել հարևան տարածքներից անհանգստացնող շինարարական աղմուկի, խմելու ջրի որակի, լողավազանների աղտոտվածության, շոգ եղանակային պայմաններում մանկապարտեզներում հովացման միջոցների բացակայության և դրա հետևանքով երեխաների ինքնազգացողության վատացման վերաբերյալ: Քաղաքացիներին հորդորվել է սահմանված կարգին համապատասխան գրավոր դիմում ներկայացնել Տեսչական մարմին՝ համապատասխան ընթացք տալու համար:

Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում ստուգման ենթարկված տնտեսավարող սուբյեկտների կողմից Տեսչական մարմնի աշխատանքների անաչառության, ընթացակարգերի թափանցիկության, տեղեկատվության որակի և Տեսչական մարմնի ծառայողների արհեստավարժության վերաբերյալ ստացվել է 2 գրավոր բողոք, որոնցից մեկի մասով ընթանում է ծառայողական քննություն:

«Թեժ գիծ» ծառայությամբ ստացված զանգերի բաշխումն ըստ ոլորտների՝

- Աշխատանքային օրենսդրության վերահսկողություն՝ 755 (35.4%),
- Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողություն՝ 138 (6.5%),
- Դեղերի շրջանառության վերահսկողություն՝ 17 (0.8%),
- Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն՝ 52 (2.4%)
- Տեղեկատվություն՝ 804 (37.7%),
- ԱԱՏՄ գործառույթից դուրս՝ 367 (17.2%)

Բացահայտված խնդիրներ և ռիսկեր.



ՀՀ ԱՌՈՂՔԱՎՈՐԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱԿՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA

ք. Երևան, Շենգավիթ, Արարատյան 26
☎ (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

Բացահայտված խնդիրներ և ռիսկեր առկա չեն:

Առաջարկություններ.

- 1) Վերլուծությունը ցույց է տալիս, որ ստացված զանգերի զգալի մասը վերաբերել է աշխատանքային իրավահարաբերություններին, ուստի նպատակահարմար է ավելացնել սեմինարների և իրազեկման միջոցառումների թիվը:

5. Վերահսկողական աշխատանքների ուսումնասիրություն և վերլուծություն (Ծրագրի 5-րդ և 6-րդ միջոցառումներ).

Ուսումնասիրության արդյունք.

Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել են հետևյալ քանակությամբ ստուգման հանձնարարագրեր:

	Ստուգման հանձնարարագրեր	Քանակ
1	Ստուգման հանձնարարագիր	281
2	Վերստուգման հանձնարարագիր	64

Ստուգումների տարեկան ծրագրով հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսվել էր իրականացնել 279 ստուգում, փաստացի հրապարակվել է 279 հանձնարարագիր (100%), ևս 2 հանձնարարագիր հրապարակվել է ՀՀ Վարչապետի համապատասխան հանձնարարականի և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի սեփականության դեմ ուղղված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչության համապատասխան քրեական վարույթով ստուգում իրականացնելու մասին որոշման հիման վրա: Բոլոր հանձնարարագրերը բխում են ստուգումների 2025 թվականի տարեկան ծրագրով տվյալ ժամանակահատվածի համար պլանավորված ստուգումներից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի ավարտին է հասցվել 196 ստուգում (1 ըստ անհրաժեշտության), որից 6-ն իրականացվել է 1-ին եռամսյակում, 109-ը՝ 2-րդ եռամսյակում, իսկ 81-ը՝ 3-րդ



եռամսյակում հրապարակված հանձնարարագրերի հիման վրա: Ընդհանուր առմամբ, երեք եռամսյակների ընթացքում ավարտվել է 403 ստուգում:

Հաշվետու ժամանակահատվածում հրապարակված 64 վերստուգման հանձնարարագրերի հիման վրա իրականացվել է 38 վերստուգում (հաշվետու փուլում ավարտվել է 69 վերստուգում): Ավարտին հասցված 38 վերստուգումներից 26-ն իրականացվել է 2024 թվականին, իսկ 12-ը՝ 2025 թվականին անցկացված ստուգումների արդյունքում տրված կարգադրագրերի հիման վրա: Թվով 1 վերստուգման ընթացքում նախկինում տրված կարգադրագրի պահանջների պատշաճ կատարումը չապահովելու արդյունքում արձանագրվել է խախտում, իսկ 37-ի դեպքում՝ կազմվել է տեղեկանք:

Հարկ է նշել, որ մտահոգիչ է այն փաստը, որ հաշվետու ժամանակահատվածում ուժը կորցրած է ճանաչվել 12 ստուգման հանձնարարագիր, իսկ չեղյալ է ճանաչվել՝ 5-ը:

Բացահայտված խնդիրներ և ռիսկեր.

1. Դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող մի քանի ստուգումների շրջանակում հսկիչ գնում իրականացնելու օրը չի ապահովվել նաև ստուգում իրականացնելու մասին հանձնարարագրի հանձնումը տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին: Գործի նյութերում բացակայել է նաև որևէ նշում այն մասին, որ հանձնարարագիրը հնարավոր չի եղել հանձնել տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին:
2. Դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող ստուգման շրջանակներում մուտքի արձանագրությունը կազմվել է 17.09.2025թ.-ին, չնայած նրան, որ այն պետք է կազմվեր դեռևս 10.06.2025թ.-ին՝ ստուգման հանձնարարագիրը տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին հանձնելու օրը: Միաժամանակ, անհրաժեշտ է արձանագրել, որ նշված ողջ ժամանակամիջոցում ստուգման գործընթացը չի կասեցվել: Արդյունքում, լիցենզիայի դադարեցված լինելու,



ինչպես նաև ստուգման ժամկետների չափապանման պայմաններում իրականացվել է ստուգում:

3. Ստուգումը երկարաձգելու վերաբերյալ հանձնարարագիրը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին ստուգման ժամկետի ավարտից հետո՝ 16-րդ օրը:
4. Ստուգման մեկնարկից օրեր անց կազմվել է գրություն հսկիչ գնում իրանացնելու անհրաժեշտության բացակայության մասին, սակայն նշված գրությունով որևէ կերպ չի հիմնավորվել ստուգման շրջանակներում հսկիչ գնում չիրականացնելու հանգամանքը:
5. Կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին որոշում, որով դեղատանը դեղերի ընդունումը, պահպանումը, իրացումը և բացթողումն վերջին 5 տարվա ընթացքում վերապատրաստում չանցած աշխատակցի կողմից իրականացնելու համար պատասխանատվություն է նախատեսվել «Վարչական իրավախախտման վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 158.1 հոդվածի 1-ին մասով՝ այն դեպքում, երբ նշված իրավախախտման համար պատասխանատվություն չի նախատեսվում:
6. Առանձին դեպքերում հաշվի չի առնվել, որ ստուգում իրականացնելու վերաբերյալ հանձնարարագրում փոփոխություն կամ լրացում կատարելու վերաբերյալ հրապարակված հանձնարարագրերը ուժի մեջ են մտնում ստուգվող սուբյեկտին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
7. Ստուգումը երկարաձգելու վերաբերյալ հանձնարարագիրը էլ. փոստի միջոցով ուղարկվել է անձի, ով գործում առկա լիազորագրերում նշված ժամկետների համաձայն՝ տվյալ օրվա դրությամբ չէր կարող հանդես գալ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի անունից և հաստատել հանձնարարագրի ստացումը:
8. Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ ներբեռնված վերստուգման տեղեկանքին կից ներկայացված լիազորագրում բացակայել է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի ստորագրությունը:



9. Ստուգման ակտի նախագծում վերջնահաշվարկի վերաբերյալ հաշվարկը սխալ է իրականացվել, զգուշացումից հետո նախագծում կատարվել է շտկում, սակայն ստուգման ակտը և կարգադրագիրը հանձնվել են տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին միևնույն հաշվարկային սխալով:
10. Հսկիչ գնում իրականացնելու պայմաններում ստուգում իրականացնելու վերաբերյալ հանձնարարագիրը չի հանձնվել տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին, իսկ մուտքի արձանագրություն չի կազմվել: Ստուգում իրականացնելու վերաբերյալ հանձնարարագիրը, հանձնարարագրում փոփոխություն և լրացում կատարելու վերաբերյալ հանձնարարագրերի հետ միասին, փոստային առաքմամբ ուղարկվել է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին, սակայն առաքանին հանձնվել է վերջինիս այն ժամանակ, երբ ստուգումը փաստացի ավարտված է եղել:
11. Ստուգման ընթացքում թե՛ ժամկետանց դեղեր, թե՛ ՀՀ-ում չգրանցված դեղեր արձանագրելու պայմաններում ստուգման շրջանակներում կիրառված 2.1 ստուգաթերթի 3-րդ կետի 1-ին ենթակետը և 3-րդ կետի 2-րդ ենթակետը նշվել են «Այո», իսկ ստուգման ակտի նախագծում և ստուգման ակտում դրանք չեն առանձնացվել որպես խախտված կետեր և չեն մանրամասնվել: Վերոնշյալ կետերի փոխարեն 2.1 ստուգաթերթում որպես խախտում արձանագրվել է 29-րդ կետը, և տվյալ իրավախախտման համար հղում է տրվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և 5-րդ մասին, չնայած նրան, որ ստուգաթերթի տվյալ կետով արձանագրված իրավախախտման համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով պատասխանատվություն նախատեսված չէ:
12. Ստուգման շրջանակներում կիրառված ստուգաթերթերը չեն ներկայացվել տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի ստորագրմանը, իսկ ստուգման ակտի նախագծում ներառված էլեկտրոնային դեղատոմսով բաց թողնման ենթակա



դեղերի ցուցակում առկա են եղել մի շարք էական թերություններ, մասնավորապես՝ ընդգրկվել են այնպիսի դեղեր, որոնք ենթակա չեն դեղատոմսով դուրս գրման, գրանցվել է նույնանուն դեղի կրկնություն:

13. Վերստուգման շրջանակներում կիրառվել է ստուգաթերթ, որը չէր ներառվել վերստուգման հանձնարարագրում, չնայած նրան, որ մինչ այդ իրականացված ստուգման արդյունքում տվյալ ստուգաթերթով արձանագրվել էին խախտումներ:
14. Ստուգումների և վերստուգումների փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ որոշ դեպքերում ստուգում կամ վերստուգում իրականացնելու վերաբերյալ հանձնարարագրի ծանուցման, մուտքի արձանագրության կազմման և ստուգաթերթերի տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին ներկայացման փաստը տվյալ օրվա դրությամբ չի հաստատվել, քանի որ գործուղման թերթիկներ չեն կազմվել և չեն ներբեռնվել փաստաթղթաշրջանառության համակարգ: Միևնույն ժամանակ, արձանագրվել է դեպք, երբ համապատասխան ստուգման շրջանակում տվյալ օրվա դրությամբ ընկերություն մուտք գործած տեսուչների տվյալները չեն համապատասխանել գործուղման թերթիկում նշված անձանց տվյալներին:
15. ՎԻՎ արձանագրությունը կազմվել է տեղում՝ առանց ենթադրյալ իրավախախտում կատարած անձին նախօրոք ծանուցելու:
16. Առանձին դեպքերում մուտք գործելու վերաբերյալ արձանագրություններում իրականացվել են ստուգման ժամանակահատվածի սխալ հաշվարկներ:
17. Որոշ դեպքերում ստուգաթերթերը չեն ստորագրվել ստուգման մասնակից բոլոր մասնագետների կողմից:
18. Որոշ դեպքերում ստուգաթերթերում նշված որոշ խախտումներ չեն ներառվել ստուգման ակտի նախագծում կամ ստուգման ակտում:



Հարկ է նշել, որ որակի ապահովման վարչությունը ինչպես փաստաթղթերի նախաստորագրման փուլում, այնպես էլ դրանց ստորագրումից հետո հայտնաբերված խնդիրների և բացթողումների մասին տեղյակ է պահում համապատասխան ստորաբաժանումներին՝ հնարավորության դեպքում շտկումներ կատարելու և հետագա կրկնությունը կանխելու համար:

Առաջարկություններ.

1) Տեսչական մարմնի ղեկավար կազմով քննարկել արձանագրված խնդիրները՝ պարզաբանելով արձանագրված բացթողումների պատճառները և սահմանելով կոնկրետ միջոցառումներ դրանց վերացման նպատակով:

2) Հսկողություն սահմանել ինչպես ստուգումների, այնպես էլ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթների սահմանված ժամկետների պահպանման ուղղությամբ:

3) Ստուգումը կասեցնելու կամ երկարաձգելու անհրաժեշտության դեպքում համապատասխան զեկուցագրերը կազմել ժամանակին՝ փորձելով նվազեցնել հնարավոր ռիսկերը:

4) Ապահովել, որ ստուգումներն ու վերստուգումները իրականացվեն բացառապես այն պայմաններում, երբ գործուղման թերթիկները տվյալ ստուգման օրվա դրությամբ նախապես պատշաճ կերպով կազմված, հաստատված և ներբեռնված են փաստաթղթաշրջանառության համակարգ:

5) Հաշվի առնելով ոլորտային առանձնահատկություններն ու սպասվող եղանակային փոփոխությունը՝ արագացնել աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտով նախատեսված ստուգումների կազմակերպումն ու իրականացումը:

6) Անաչառության և կողմնակալության ռիսկի նվազեցման նպատակով առաջարկվում է բացառել ստուգումների տարեկան ծրագրում մշտապես ընդգրկվող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ ստուգումների

իրականացումը միևնույն ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց կողմից:

Հաշվետվությունների հավաստիության ուսումնասիրություն

Միջոցառման շրջանակներում ուսումնասիրվել են եռամսյակի ընթացքում ներկայացված հաշվետվությունները, ինչպես նաև ստուգումների և վարչական վարույթների էլեկտրոնային գրանցամատյանները: Հաշվետվությունները ոչ միշտ են ներկայացվել սահմանված ժամկետներում: Թեև որոշ տեխնիկական բնույթի բացթողումներ արձանագրվել են, սակայն դրանք չեն ազդել հաշվետվությունների հավաստիության վրա: Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից վարվող ստուգումների և վերստուգումների էլեկտրոնային գրանցամատյանների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ մատյանները թերի են լրացվում և պարունակում են բազմաթիվ բացթողումներ:

Բացահայտված խնդիրներ և ռիսկեր.

- որոշ դեպքերում ստուգումների և վերստուգումների ժամկետները սխալ են նշվել կամ չեն նշվել,
- որոշ դեպքերում «ստուգաթերթերի հարցերի ընդհանուր կշիռ» և «խախտումների ընդհանուր կշիռ» սյունակները չեն լրացվել կամ լրացվել են սխալ,
- որոշ ստուգումների տվյալների լրացումն իրականացվել է ոլորտին ոչ համապատասխան աղյուսակում,
- որոշ դեպքերում համապատասխան սյունակում նշվել են ստուգաթերթերի համարներ, որոնք ստուգման շրջանակներում չեն կիրառվել,
- որոշ դեպքերում մուտք գործելու վերաբերյալ տվյալները չեն նշվել,
- որոշ դեպքերում «վերստուգման հիմք» սյունակը սխալ է լրացվել,
- որոշ դեպքերում ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց պաշտոնները չեն նշվել,



- որոշ դեպքերում ավարտված ստուգումների/վերստուգումների վերաբերյալ գրանցումները համապատասխան մատյաններում բացակայել են:

Առաջարկություններ.

- 1) Ապահովել ստուգումների և վերստուգումների էլեկտրոնային գրանցամատյանների ճշգրիտ և պատշաճ վարումը:
- 2) Իրականացնել ստուգվող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տվյալների մուտքագրումը գրանցամատյաններում՝ հանձնարարագրերը ստուգում իրականացնող համապատասխան ստորաբաժանմանը փոխանցելուց անմիջապես հետո:

6. Տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագրի (այդ թվում՝ կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագրի) կատարման ուսումնասիրություն և վերլուծություն (Ծրագրի 7-րդ ,8-րդ միջոցառում).

Ուսումնասիրության արդյունք.

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի 2025 թվականի գործունեության տարեկան ծրագրի (այսուհետ նաև՝ Ծրագիր) շրջանակներում 3-րդ եռամսյակի ընթացքում նախատեսվել է իրականացնել ընդհանուր առմամբ 10 միջոցառում: Նախատեսված միջոցառումներից բոլորը հաջողությամբ իրականացվել են սահմանված ժամանակացույցին և նպատակներին համապատասխան, բացառությամբ երկու միջոցառման: Տեսչական մարմնի 2025 թվականի գործունեության տարեկան ծրագրով հաշվետու ժամանակահատվածում նախատեսվել էր իրականացնել՝

- 1) Ծրագրի Հավելված N 1-ի 6-րդ կետ՝ «Նոր ընդունված հանրային առողջապահական նորմատիվների հիման վրա նոր ստուգաթերթերի մշակման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում Գրասենյակ»:

Միջոցառման շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարի 2025 թվականի օգոստոսի 4-ի «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ձեռքերի հիգիենային ներկայացվող պահանջներ» հանրային առողջապահական նորմատիվը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 46-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 86-Ն հրամանի հիման վրա մշակվել է «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ձեռքերի հիգիենային ներկայացվող պահանջների կատարման նկատմամբ իրականացվող վերահսկողություն» N 1.25 ստուգաթերթը և ներկայացվել Գրասենյակ:

- 2) Ծրագրի Հավելված N 2-ի 3-րդ կետը՝ «Գործատուների, աշխատողների և նրանց ներկայացուցիչների համար աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի կիրարկման ուղղությամբ սեմինարների կազմակերպում».

Միջոցառման շրջանակներում կազմակերպվել են սեմինար դասընթացներ, որոնց ընթացքում մասնակիցներին ներկայացվել է ստուգումների կազմակերպման և իրականացման գործընթացի, աշխատանքային օրենսգրքով սահմանված նորմերի, աշխատանքային օրենսգրքի առանձին դրույթների կիրառման առանձնահատկությունների, կիրառման կարգի, ինչպես նաև աշխատանքային օրենսգրքում կատարված վերջին փոփոխությունների, ներառյալ՝ թվային համակարգի միջոցով աշխատանքային պայմանագրերի կնքման կարգի վերաբերյալ տեղեկատվություն:

- 3) Ծրագրի Հավելված N 2-ի 5-րդ կետը՝ «Սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման/հանրային առողջապահության ոլորտի տնտեսավարող սուբյեկտներին ոլորտում գործող նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ իրազեկում».



Միջոցառման շրջանակներում իրականացվել են մի շարք սեմինարներ բժշկական ոլորտի աշխատակիցների, ճամբարականների և դպրոցահասակ երեխաների համար: Սեմինարների ընթացքում մասնակիցներին ներկայացվել են սանիտարական նորմերի և կանոնների առանձին պահանջներ, այդ թվում՝ առանձին վարակիչ հիվանդությունների, մասնավորապես՝ կատաղության, աղիքային վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը ներկայացվող սանիտարահամաճարակաբանական կանոնների և նորմերի վերաբերյալ:

4) *Ծրագրի Հավելված N 2-ի 6-րդ կետը՝ «Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների համար իրազեկման դասընթացների իրականացում».*

Միջոցառման շրջանակներում իրականացվել են մի շարք դասընթացներ՝ ուղղված ոլորտում գործող և նոր ընդունված իրավական ակտերի պահանջների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

5) *Ծրագրի Հավելված N 2-ի 8-րդ կետը՝ «Տեսչական մարմնի գործունեության և կատարվող աշխատանքների մասին իրազեկում».*

Տեսչական մարմնի գործունեության և իրականացված աշխատանքների վերաբերյալ իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի աշխատակիցների կողմից պատրաստվել են մի շարք տեղեկատվական նյութեր, որոնք տեղ են գտել ինչպես Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում, այնպես էլ ֆեյսբուքյան էջում:

6) *Ծրագրի Հավելված N 2-ի 10-րդ կետը՝ «Ոլորտային նշանակալի և տոնական օրերի վերաբերյալ հանրային իրազեկում».*

Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում հրապարակվել են տեղեկատվական նյութեր՝ նվիրված գիտելիքի և դպրության, կատաղության դեմ պայքարի և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համաշխարհային օրվան:

7) Ծրագրի Հավելված N 2-ի 11-րդ կետը՝ ««Թեժ գիծ» ծառայությամբ ստացված զանգերի քանակի և բովանդակության պարբերաբար ամփոփում, վերլուծություն և լուսաբանում».

Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում հրապարակվել է նյութ «Թեժ գիծ» ծառայությամբ ստացված զանգերի քանակի և բովանդակության վերաբերյալ՝ ոլորտային դասակարգմամբ:

8) Ծրագրի Հավելված N 2-ի 12-րդ կետը՝ «Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներին առնչվող նոր ընդունված իրավական ակտերի, այդ թվում՝ ստուգաթերթերի վերաբերյալ պաշտոնական կայքէջում իրազեկում և ակտերի հրապարակում».

Տնտեսավարող սուբյեկտների իրազեկվածության բարձրացման նպատակով Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում հրապարակվել են վերահսկողության ոլորտներին առնչվող նոր ընդունված կամ փոփոխման ենթարկված իրավական ակտերը:

Բացահայտված խնդիրներ և ռիսկեր.

1) Ծրագրի Հավելված N 2-ի «Մարդկանց, այդ թվում՝ երեխաների, թրաֆիքինգի և աշխատանքային շահագործման, հարկադիր աշխատանքի վտանգի նվազեցման ուղղություններով սեմինար-քննարկումների անցկացում» և «Իրազեկման աշխատանքներ, այդ թվում՝ մինչև 18 տարեկան անձանց, երիտասարդների հետ սեմինարների, դասընթացների միջոցով» միջոցառումները հաշվետու ժամանակահատվածում չեն իրականացվել:

7. Պաշտոնական կայքէջի գործարկման և տեղեկատվական սպասարկման ուսումնասիրություն և վերլուծություն (Ծրագրի 9-րդ միջոցառում).

Ուսումնասիրության արդյունք.

Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի սպասարկման աշխատանքներն ընդհանուր առմամբ բավարար են: «Նորություններ» էջի թարմացման



հաճախականությունը բարձր է, ապահովվում է հրապարակվող տեղեկատվության արդիականությունը, Տեսչական մարմնի գործունեության պատշաճ լուսաբանումը:

Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ, արցելություններ, հանրային և մասնագիտական քննարկումներ, որոնց վերաբերյալ հրապարակվել են նյութեր ինչպես Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում, այնպես էլ ֆեյսբուքյան էջում: Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի և ֆեյսբուքյան էջի հրապարակումների թիվը 135-ն է: Նյութեր են հրապարակվել ինչպես տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների, այնպես էլ դպրոցականների և ճամբարական երեխաների շրջանում իրազեկվածության բարձրացման նպատակով Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների համապատասխան մասնագետների կողմից իրականացված սեմինարների, ղեկավար կազմի մի շարք բժշկական հաստատություններում իրականացրած աշխատանքային այցերի մանրամասների վերաբերյալ: Լուսաբանվել են արտերկիր իրականացված արցելությունների շրջանակում միջազգային գործընկերների հետ համագործակցության խորացմանն ու փորձի փոխանակմանը միտված խորհրդակցությունների և քննարկումների արդյունքները:

Տեղադրվել են նյութեր մարզային արցելությունների շրջանում բնակիչների հետ անցկացված հանդիպումների վերաբերյալ, որոնք նպատակ են ունեցել ապահովել բնակիչների կողմից բարձրաձայնվող խնդիրների լսելիությունը և դրանց վերացման ուղղությամբ հետագա գործողությունների կազմակերպումը: Միևնույն ժամանակ, ոլորտային նշանակալի և տոնական օրերի վերաբերյալ հանրային իրազեկման բաժրացման նպատակով հրապարակվել են տեղեկատվական նյութեր՝ նվիրված գիտելիքի և դպրության, կատաղության դեմ պայքարի և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համաշխարհային օրվան: Հանրությանն իրազեկվել է դեղի հետկանչի մասին:

Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում պարբերաբար հրապարակվել են Տեսչական մարմնում առկա թափուր հաստիքների մասին հայտարարություններ, վերահսկողության տարբեր ոլորտներում իրականացվելիք սեմինարների մասնակցության հրավերներ:

Միաժամանակ, հրապարակվել են վերահսկողության ոլորտներին առնչվող նոր ընդունված կամ փոփոխման ենթարկված իրավական ակտերը: Պաշտոնական կայքէջում տեղ են գտել նաև Տեսչական մարմնի փորձագետների կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները:

8. Տեսչական մարմնի գործունեության կադարողականի գնահատումը և հաստատված չափորոշիչների (Ծրագրի 10-րդ միջոցառում).

Իրականացվել է Տեսչական մարմնի 2025 թվականի 3-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատում (ներկայացվում է առանձին փաստաթղթով):


9. Կադրային համալրման, ծառայողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների կադարելագործման գործընթացների ուսումնասիրություն և վերլուծություն (Ծրագրի 11-րդ միջոցառում).

2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ Տեսչական մարմնի հաստիքացուցակում առկա 334 հաստիքից համալրված է 205 հաստիք: Համալրվածությունը կազմում է 61.4%: Եռամսյակի ընթացքում աշխատանքի է ընդունվել 1, աշխատանքից ազատվել է 3 անձ:

Եռամսյակի ընթացքում թափուր հաստիքների համալրման նպատակով կազմակերպվել և հրապարակվել է 19 մրցույթ (նախորդ եռամսյակ՝ 12): Միևնույն ժամանակ, մտահոգիչ է այն փաստը, որ մի շարք մրցույթների դեպքում առհասարակ չեն գրանցվել դիմումներ, ինչը բացասաբար է ազդում թափուր հաստիքների համալրման գործընթացի վրա: Մրցույթների արդյունքները հրապարակվել են Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջում՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունը:



Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի քաղաքացիական ծառայող հանդիսացող տարբեր ստորաբաժանումների տասնյակ աշխատակիցներ մասնակցել են վերապատրաստման դասընթացների, որոնք ուղղված են եղել վերջիններիս իրազեկվածության, մասնագիտական գիտելիքների և գործնական կարողությունների բարելավմանն ու բարձրացմանը:



10. Ստորաբաժանումներում աշխատողների ծանրաբեռնվածության ուսումնասիրություն և վերլուծություն (Ծրագրի 12-րդ միջոցառում).

Միջոցառման շրջանակներում ուսումնասիրվել է բոլոր ստորաբաժանումներում ղեկավարների կողմից աշխատողների միջև աշխատանքների բաշխման համաչափությունը: Մասնավորապես, հավաքագրվել և վերլուծվել է ստուգումների և վարչական վարույթների գործընթացում յուրաքանչյուր աշխատողի ներգրավվածությունը և այդ քանակների համաչափությունը նույն ստորաբաժանման աշխատողների միջև:



Բացահայտված խնդիրներ և ռիսկեր.

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ որոշ ստորաբաժանումներում առկա է աշխատանքների բաշխման ակնհայտ անհամաչափություն, առանձին դեպքերում մի աշխատողի անհատական ծանրաբեռնվածությունը մի քանի անգամ գերազանցել է մյուսի ծանրաբեռնվածությանը: Տվյալ խնդիրը որոշ չափով պայմանավորված է եղել նոր ընդունված աշխատակիցների փորձառության պակասով: Ակնհայտ է, որ աշխատանքի անհավասար բաժանումը ոչ միայն կարող է ծանրաբեռնվածության պատճառ դառնալ, այլև ուղիղ ազդեցություն ունենալ աշխատանքային արդյունավետության վրա:

Առաջարկություն.

1. Հանձնարարել ստորաբաժանումների ղեկավարներին՝ ապահովել ստորաբաժանման ներսում (տարածքային կենտրոններում՝ առանձին բաժիններում) այդ աշխատողների համաչափ ծանրաբեռնվածությունը:

2. Նոր ընդունված և փորձառության պակաս ունեցող աշխատակիցներին ներառել միևնույն ոլորտի կենտրոնական և տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող ստուգումներում՝ նպաստելով նրանց մասնագիտական հմտությունների զարգացմանը, աշխատանքի որակի բարելավմանը և արագ ներգրավմանը ընթացիկ աշխատանքներում: